



# Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend  
Houssig Nishanian  
Pastor  
Telephone (416) 759-6958

Toronto. 19 Յունուար 1981

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Սր.Արք.Եպիսկ.Մանուկեան

Բարեջան Առաջնորդ Ամերիկայի Արեւելեան Թեմի  
Նիւ Եորք.

Սրբազան Հայր,

Ստացած ըլլալով Սրբազնութեանդ 22-12-80 թուակիր եւ թիւ 27107 նամակը, 12-1-81ին, Ձեր հրահանգը անմիջապէս ծիական Խորհուրդին հաղորդելով եւ ստանալով Գնատայի Տուրգերու գրասենեակին ՚՚Ափէնտիքս Սի Ինֆորմէյշըն Սիրզիւլըր ՚՚ին 20-8-80ին ուղղուած նամակին օրինակը ներփակ կը գտնէք նամակիս մէջ:

Կ՛ուզեմ ըսել Արքազան Հայր թէ հակառակ միշտ ունեցած ընդդիմութեանս, սոյն խնդիրը եղած է, օգտագործելով արձակուրդիս բացակայութեան շրջանը եւ վերադարձիս ինքզինքս գտած եմ կատարուած իրողութեան մը առջեւ որ արդէն ուշ էր:

Ես եւ Երիցունհին, անհուն հրժուանքով ստացանք Ձեր Հայրական Օրհնաբեր Շնորհաւորականը Ս.Ծննդեան եւ Նոր Տարւոյ զոյգ Տօներուն առթիւ:

Անկեղծ սիրով հաճեցէք ընդունիլ Երեցտիկնոջս հետ միասին նաեւ մեր սրտագին շնորհաւորութիւնները Նոր Տարւոյ եւ Ս.Ծննդեան առթիւ խնդրելով Ամէնակալէն որ Ձեր հայրական հովանին մնայ միշտ մեր գլխէն անպակաս:

Մատչելով ի համրոյր Ս.Աջոյդ

Որդիական Ակնաձանօք

Յուսիկ Քհնյ. Նշանեան